

Բանալի բառեր՝ ռեսուրսների ապահովվածություն, տնտեսական զարգացում, բնակչության կենսամակարդակ, տարածք, բնակչության թիվ, ենթակառուցվածքային ռեսուրսներ, տնտեսական ցուցանիշներ, արտադրության արդյունավետություն:

**ՀՏԴ 338**

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՅՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՐՑԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆՆԵՐՈՒՄ

### ԼԵՆՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու,  
ԵՊՀ տնտեսագիտության և միջազգային տնտեսական  
հարաբերությունների ամբիոնի դոցենտ*

Հասարակության տնտեսական զարգացման ժամանակաշրջանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցանկացած երկրի տնտեսությունում մեծաքանակ և բազմապիսի ռեսուրսների առկայությունը, որպես կանոն, հնարավորություն է տվել ստանալ ավելի շատ արդյունքներ, արտադրել առավել չափով շատ ապրանքներ ու մատուցել ծառայություններ: Պատմական զարգացման տարբեր փուլերում մեծաքանակ ռեսուրսների առկայությունը պետություններն հիմնականում ապահովել են պատերազմների միջոցով, թալանի և իրենց ենթակա կամ գաղութային տնտեսությունների ձևավորմամբ: Ենթակա երկրներից և նրանց բնակիչներից գանձված հարկերը ոսկու, արծաթի, թանկարժեք քարերի ու տարբեր մթերքների տեսքով մեծապես նպաստել են ցանկացած երկրի տնտեսական զարգացմանն ու հզորացմանը: Իսկ այդ հանգամանքն էլ իր հերթին պայմանավորում էր գաղութատեր պետությունում արտադրության և գյուղատնտեսության զարգացում, նոր շինությունների կառուցում, նոր արտադրատեսակների ստեղծում, և ինչ-որ չափով նաև՝ այդ պետության ազգաբնակչության բարեկեցության բարձրացում: Մասնավորապես, եթե Հին Հռոմում տնտեսական բարձր աճն ապահովվում էր գրավյալ տարածքներից բերված բազմաթիվ ռեսուրսների հաշվին, ապա Հին Հունաստանն իր տնտեսական զարգացումն առավելապես ապահովում էր ներքին ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ակտիվ ապրանքաշրջանառության և միջազգային առևտրի շնորհիվ: Այստեղ նկատելի տնտեսական առաջընթաց էին ապահովում պոլիսները, որոնք հիմնված լինելով ինքնաբավության սկզբունքի վրա, տվյալ պատմական ժամանակաշրջանում (մինչև մ.թ.ա. 5-4-րդ դարերը) խիստ արդյունավետ էին աշխատում, եւ պատահական չէր, որ հենց Հին Աթենքն էր համարվում Հին աշխարհի գլխավոր արհեստանոցը:

Պատմական առանձնահատկությունները դիտարկելիս՝ վերն աավածն այս կամ այն չափով բնութագրական է եղել նաև մեր երկրի տնտեսական զարգացմանը: Լինելով մեծագույն հայրենասեր, հզոր քաղաքական ու ռազմական գործիչ, արքայից-արքա Տիգրան Մեծը նկատելիորեն ընդլայնելով ու ամրապնդելով երկրի սահմանները, առաջին հերթին հենց մեծաքանակ տնտեսական ռեսուրսներ ապահովեց Հայաստան երկրի արագ զարգացման համար: Ընդ որում, բնական, արտադրական և աշխատանքային այդ բազմապիսի ռեսուրսները, առաջին հերթին ուղղված լինելով երկրի պաշտպանունակության ամրապնդմանը, ամրակուռ բերդերի, պարիսպների և քաղաքների կառուցմանը՝ արագ կերպով նպաստեցին նաև տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը, արհեստագործության ընդլայնմանն ու իր ժամանակի համար բարձր մշակույթի ձևավորմանը: Եթե դիտում ենք Բագրատունիների թագավորության սկզբնական ժամանակաշրջանը, երբ մեր երկիրը հիմնականում զերծ էր պատերազմներից, ապա այստեղ Հայաստանի տնտեսական արագ աճն ապահովեց նոր բնակավայրերի ու քաղաքների ստեղծմամբ, արհեստների ու գյուղատնտեսության ընդլայնմամբ, միջազգային առևտրի ծավալների մեծացմամբ և վերջին հաշվով՝ արտադրողական ուժերի կտրուկ զարգացմամբ: Համարյա նմանատիպ պատկեր դիտարկվեց նաև Կիլիկյան Հայաստանի թագավորության ժամանակաշրջանում, երբ տվյալ ժամանակի համար բարձր տնտեսական ու աշխարհագրական բարենպաստ պայմաններում տնտեսական նոր ռեսուրսների ներգրավումն արագ կերպով սկսեց ապահովել նաև տնտեսության արագ զարգացում:

17-19-րդ դարերում, գաղութատիրական համակարգի նոր տիպի ձևավորման և շուկայական հարաբերությունների արագ ընդլայնման հետ միասին, համաշխարհային տնտեսությունում դարձյալ գործում էր նույն սկզբունքը՝ տնտեսական բարձր ու կայուն աճ են ապահովում հիմնականում հենց այն երկրները, որոնք ունենալով բազմաքանակ և բազմապիսի ռեսուրսներ, կարողանում են արագ հարմարվել տվյալ ժամանակի պահանջներին: Այս ենթատեսքում շատ բնութագրական է Անգլիայի դիտարկումը: Համարվելով կապիտալի նախասկզբնական կուտակման դասական երկիր, այստեղ ֆեոդալական հողօգտագործումն արագ վերափոխվեց կապիտալիստական հողօգտագործման, երբ առավել ձեռնառու դարձավ անգլիական որակյալ բրդի արտադրությունն ու արտահանումը համաշխարհային շուկաներ: Տվյալ տնտեսական գործոնով պայմանավորված՝ արագ բարձրացվեց ռենտան, վարելահողերը վերածվեցին արոտավայրերի, իսկ գյուղացիները որպես ազատ աշխատուժ սկսեցին աշխատել մանուֆակտուրաներում: Այսինքն, ձեռնարկատերերի և ամբողջ տնտեսության համար սկսեց մեծ շահույթ ու բարձր աճ ապահովել բնական և աշխատանքային ռեսուրսների անհամեմատ ավելի նպատակային ու ինտենսիվ օգտագործումը: Կարող ենք ասել, որ նույն տնտեսական ռեսուրսները տվյալ պայմաններում սկսեցին ավելի արդյունավետ աշխատել:

Դիտարկվող ժամանակաշրջանում Անգլիան կարողանում էր բարձր տնտեսական աճ ապահովել տնտեսական ռեսուրսների ինչպես ինտենսիվ, այնպես էլ էքստենսիվ օգտագործման շնորհիվ: Անգլիան, լինելով աշխարհի խոշորագույն

գաղութատեր պետությունը, երբ գաղութների տարածքը 75 անգամ գերազանցում էր իր երկրի տարածքը, 1860-ական թթ. տալիս էր համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 36%-ը[1]:

Կուտակելով մեծաքանակ տնտեսական ռեսուրսներ և արդյունավետ օգտագործելով դրանք, հանդիսանալով արդյունաբերական հեղաշրջման հայրենիքը, հենց այդ ժամանակաշրջանի Անգլիան դարձավ աշխարհի արհեստանոցը: Ընդ որում, անգլիական կապիտալը հիմնականում ներդրվում էր գաղութներում, որտեղ չափազանց էժան, համարյա ձրի աշխատուժն ու տարբեր, հաճախ հազվագյուտ բնական ռեսուրսների խիստ մատչելիությունը ապահովում էին արտադրության շահութաբերության անհամեմատ ավելի բարձր մակարդակ: Եվ, փաստորեն, Անգլիային ձեռնտու դարձավ ոչ թե հայրենական արտադրության զարգացումը, այլ ձեռնարկատիրության և տնտեսության ընդլայնումը գաղութներում:

Հնարավորինս շատ տնտեսական ռեսուրսների տիրապետման և դրանց արդյունավետ օգտագործման շնորհիվ առավել բարձր տնտեսական աճի ապահովման հիմնախնդիրը վառ կերպով ցույց է տալիս նաև 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի Գերմանիայի տնտեսության ուսումնասիրությունը: Մինչև 19-րդ դարի կեսերը Գերմանիան համարվում էր խիստ հետամնաց երկիր և ագրարային կցորդ եվրոպական զարգացած երկրների համար, սակայն արդյունաբերական հեղաշրջումը, Գերմանական միասնական պետության ձևավորումն ու գերմանական ազգի կազմակերպական բարձր մակարդակն արագ բերեցին տնտեսության բոլոր (հատկապես՝ առաջատար ճյուղերի) կտրուկ զարգացմանը: Արդեն 20-րդ դարի սկզբին այն համարվում էր հզոր երկիր, տնտեսական զարգացման մակարդակով առաջին տեղը գրավելով Եվրոպայում և երկրորդը աշխարհում՝ ԱՄՆ-ից հետո: Սակայն, ի տարբերություն Անգլիայի և Ֆրանսիայի, Գերմանիայի ելքակայության տակ գտնվող գաղութները խիստ փոքր էին և Եական դեր չէին խաղում նրա տնտեսական զարգացման գործում: Հենց մեծաքանակ ռեսուրսների ու կենսական տարածքների ձեռք բերման անհրաժեշտությունը ստիպեց Գերմանիային տնտեսությունում շեշտը դնել ռազմականացման վրա և արագ պատրաստվել համաշխարհային պատերազմին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գաղութային համակարգի փլուզումը, միջազգային տարբեր կառույցների ձևավորումը, գիտության, տեխնիկայի և համաշխարհային առևտրի կտրուկ զարգացումը որոշակի չափով փոխել են տնտեսական զարգացման օրինաչափությունները: Երկրները սկսեցին տնտեսական բարձր աճ ապահովել ոչ այնքան մեծաքանակ տնտեսական ռեսուրսների առկայության, որքան ունեցած ռեսուրսների ինտենսիվ օգտագործման, զարգացած երկրների ֆինանսական և կազմակերպական օգնության, գիտատեխնիկական առաջընթացի, միջազգային առևտրի ընդլայնման հնարավորությունների լրիվ կիրառման, մրցակցային շուկայական հարաբերությունների արագ ձևավորման շնորհիվ: Հենց վերը նշված հիմնախնդիրների արդյունավետ լուծումը թույլ տվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո խիստ ավելրված և թույլ տնտեսություն ունեցող Գերմանիային ու Ճապոնիային արագ կյանքի կոչել «գերմանական» եւ «ճապոնական» հրաշքը: Այդ բարեփոխումների ընթացքում Գերմանիայում ու Ճապոնիայում իրականացված տնտեսական, իրավական և կազմակերպական միջոցառումները, բնական է, որ ունեին որոշակի առանձնահատկություններ: Սակայն, և «գերմանական» և թե «ճապոնական» հրաշքի մեխանիզմը աշխատում էր նույն սկզբունքով՝ հիմնվել առկա ռեսուրսների վրա ու առավելագույն արդյունավետ օգտագործել տվյալ ժամանակաշրջանում տնտեսական բարձր աճի ապահովման բոլոր հնարավորությունները, այդ թվում՝ արտասահմանյան օգնությունը: Հենց այդ էլ հնարավորություն տվեց Գերմանիային մինչև 1960-ական թթ. կեսերը, իսկ Ճապոնիային՝ մինչև 1970-ականների սկիզբը ապահովել խիստ բարձր տնտեսական աճ՝ տարեկան մինչև 15% և դասվել աշխարհի ամենազարգացած երկրների շարքը: Տնտեսական բոլոր ռեսուրսների նպատակաուղղված և արդյունավետ օգտագործումը, արտադրողական ուժերի կտրուկ զարգացումները, արտադրության կառուցվածքային նկատելի փոփոխությունները Գերմանիայում և Ճապոնիայում շարունակվում էին նաև հետագա տարիներին: Սակայն համաշխարհային տնտեսությունում 1970-ականներին, իրավիճակը որոշակիորեն փոխվել էր, մասնավորապես, Եներգակիրների գների զգալի բարձրացումներն ու համընդհանուր ինֆլյացիոն երևույթները թույլ չտվեցին Գերմանիային ու Ճապոնիային շարունակել տնտեսական բարձր աճի ապահովման գործընթացները:

Ժամանակակից պայմաններում, հազարամյակների սահմանազօնի համաշխարհային տնտեսությունում դարձյալ սկսեցին դրսևորվել խիստ կարևոր, Եական, կարող ենք ասել, նաև՝ արմատական փոփոխություններ: Դադարեց գործել սոցիալիստական համակարգը, մինչև այդ չարձանագրված հսկայական չափերով ամբողջ աշխարհում սկսեցին զարգանալ գլոբալացման ու տնտեսական ինտեգրման գործընթացները, միջազգային առևտրի ծավալները, և, որ, խիստ կարևոր է, պետությունների տնտեսական աճին զուգահեռ՝ կարևորագույն ցուցանիշներ համարվեցին մարդկանց կյանքի որակը, բնակչության բարեկեցությունը, բնապահպանությունը:

Ինչպես վերը նշեցինք, տնտեսական բարձր աճի ապահովման համար այժմ այնքան էլ Եական չէ երկրի ունեցած ռեսուրսների քանակը: 1983թ. տվյալներով, տնտեսապես զարգացած կապիտալիստական երկրները, կազմելով աշխարհի տարածքի 23,9%-ը և ունենալով երկրագնդի բնակչության միայն 17,4%-ը, սպառում էին հումքային ռեսուրսների հիմնական տեսակների 94%-ը, այդ թվում՝ նավթի 87%-ը, գազի 89%-ը, պողպատի 84% և այլումինի 92%-ը[2]: 2000թ. տվյալներով, տնտեսապես զարգացած երկրները, արտադրելով առաջնային Եներգամետաղների ամբողջ ծավալի 39%-ը, սպառում էին դրանց 60%-ը[3]: Այսօր էլ վիճակն Եականորեն չի փոխվել: ԱՄՆ-ը, ունենալով երկրագնդի բնակչության 4,59%-ը, սպառում է աշխարհում օգտագործվող Եներգիայի 25%-ը և արտադրում է համաշխարհային ՀՆԱ-ի 22%-ը[4]:

Տնտեսական իրավիճակի՝ վերը նշված փոփոխությունների ու հարցադրումների տեսանկյունից, հիմք ընդունելով բնակչության համանման կենսամակարդակ ունեցող երկրների ռեսուրսապահովման ցուցանիշների և ժամանակակից պայմաններում կարևորագույն համարվող տնտեսական, սոցիալական ու բնապահպանական գործոնների համեմատական վերլուծությունը, դիտարկենք Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համար կարևոր համարվող մի շարք մտտեցումներ:

Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալներով, 2016թ. բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակով (գնողունակության պարիտետի հաշվառմամբ) Հայաստանի Հանրապետությունն աշխարհի 186 երկրների ցանկում զբաղեցնում է 111-րդ տեղը՝ 8621 ԱՄՆ դոլլար: Համեմատության համար դիտարկենք նշված ցանկում մեր երկրից ավելի բարձր տեղ զբաղեցրած հինգ երկրների (106-ից 110-րդ)՝ Պարագվայ, Ֆիլիպիններ, Յամայկա, Սալվադոր, Լիբիա և ավելի ցածր տեղ զբաղեցրած հինգ երկրների (112-ից 116-րդ)՝ Մարոկկո, Ուկրաինա, Բուրնա, Բելիզ, Գվատեմալա և Նեդերլանդները: Միջազգային մի շարք կարևորագույն ցուցանիշները [5]: Վերլուծությունները կատարվել են, օգտվելով հիմնականում վերը նշված աղբյուրից:

Ուսումնասիրությունը սկսենք տվյալ երկրի ունեցած տարածքի տեսանկյունից: Դիտարկվող 10 երկրներից չորսի տարածքը զիջում է, իսկ վեցինը՝ գերազանցում ՀՀ տարածքը: Ընդ որում, եթե մեր երկրի տարածքը 2.7 անգամ գերազանցում է Յամայկայի տարածքը, ապա Լիբիայի հետ համեմատության դեպքում զիջում է նրան 59,2 անգամ, Ուկրաինային՝ 20,3 և Մարոկկոյին՝ 15 անգամ: Եթե վերլուծության հիմք ընդունենք երկրի ունեցած բնակչության թիվը, ապա այստեղ ևս Հայաստանը գերազանցում է նշված երկրներից չորսին և զիջում վեցին: Ընդ որում, եթե Բելիզի համեմատությամբ մենք 7,5 անգամ ավելի շատ բնակչության թիվ ունենք, ապա այդ ցուցանիշով Ուկրաինային զիջում ենք 14,1, իսկ Մարոկկոյին՝ 11,4

անգամ: Որևէ կոնկրետություն չի տալիս նաև երկրի զբաղեցրած աշխարհագրական դիրքի համեմատությունը (վերը նշված տասնմեկ երկրներից մեկը գտնվում է Եվրոպայում, երկուսը՝ Ասիայում, մեկը՝ Օվկիանիայում, երկուսը՝ Աֆրիկայում և հինգը՝ Ամերիկյան մայրցամաքում): Ընդ որում, դիտարկվող ցանկում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակով 3-րդ տեղը գրավող Սինգապուրը, բնակչության թվով 1,8 անգամ գերազանցելով ՀՀ-ին, զբաղեցնում է մի տարածք, որը կազմում է մեր երկրի տարածքի միայն 2, 6%-ը:

Ինչպես արդեն նշել ենք վերևում, Հին աշխարհում պետության տնտեսական հզորությունն ու բնակչության քիչ թե շատ բարեկեցիկ կյանքը մեծ չափով պայմանավորված էր տվյալ երկրի զբաղեցրած տարածքով, բնակչության թվով, արհեստների և առևտրի զարգացման մակարդակով: Սակայն հասարակության զարգացման վերջին ժամանակաշրջաններում (18-րդ դարի վերջերից սկսված արդյունաբերական հեղաշրջումը, այնուհետև մեկ դար հետո իրականացված տեխնոլոգիական հեղափոխությունը, գաղութային համակարգի վերացումը, ամբողջ աշխարհում շատ արագ իրականացվող տնտեսական ինտեգրման և գլոբալացման գործընթացները) աշխարհում տնտեսական իրավիճակն էականորեն փոխվել է (ինչը մեկ անգամ ևս հաստատում է վերը կատարված վերլուծությունը): Ռեսուրսների բարձր ապահովվածություն ասելով այժմ հասկանում ենք ոչ միայն, և ոչ այնքան տվյալ երկրի զբաղեցրած տարածքը կամ բնակչության թիվը, որքան ամպլա գիտական ներուժը, մարդկային կապիտալի զարգացման մակարդակը, բարձր տեխնոլոգիաների և տեղեկատվական տեխնոլոգիաների հասանելիությունը, ռեսուրսների օգտագործման ինտենսիվության աստիճանը, ռեսուրսների ներկրման հնարավորությունները եւ Եներգիայի այլընտրանքային աղբյուրների պաշարները: Այս գործոնների առաջնահերթությունն ի նկատի ունենալով դիտարկենք ՀՀ տնտեսության զարգացման հնարավորությունները:

Սոցիալական, տնտեսական, բաղաբանական և իրավական տարբեր գործոններ հաշվի առնող կյանքի որակի ցուցանիշի հաշվարկը 2005թ. համար կատարվել է 111 երկրի համար: Այստեղ ՀՀ-ն զբաղեցնում է միայն 85-րդ տեղը: Համեմատվող երկրներից մեզից առաջ են Սալվադորը, Յամայկան, Մարոկկոն ու Պարագվայը: Ավելի ցածր դիրքերում են Գվատեմալան և Ուկրաինան: Մեզ հետաքրքրող մյուս երկրները չեն ընդգրկվել այդ ցուցակում՝ դրանց մասին անհրաժեշտ տեղեկությունների բացակայության պատճառով: Ընդ որում, 2013թ. կատարված վերլուծությունում ընդգրկված չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Վերը նշված նմանատիպ գործոնները, ինչպես նաև գրագիտությունն ու կրթությունը ներառող մարդկային զարգացման ինդեքսի հաշվարկն իրականացվել է 2015թ.: 188 երկրի համար: Այստեղ բոլոր երկրները բաժանվել են չորս մեծ խմբերի՝ շատ բարձր, բարձր, միջին և ցածր: Հետազոտվող 11 երկրներից վեցը (ՀՀ, Ուկրաինա, Ֆիջի, Յամայկա, Լիբիա և Բելիզ) ընդգրկված են բարձր խմբում (առաջատարը ՀՀ-ն է՝ 84-րդ տեղ), իսկ մնացած 5-ը՝ միջին խմբում:

Կրթության ինդեքսի հաշվարկում (2007թ., 180 երկիր) ուսումնասիրվող երկրներից Ուկրաինան գրավում է 42-րդ, իսկ Հայաստանը՝ 55-րդ տեղը: Մնացած երկրներն ավելի ցածր դիրքերում են: Այսպես, Բուլանը զբաղեցնում է միայն 163-րդ տեղը: Միջազգային մակարդակով չորս տարին մեկ հետազոտություններ են իրականացվում նաև հանրակրթական դպրոցների 4-րդ և 8-րդ դասարաններում սովորողների մաթեմատիկական առարկաների ու բնագիտության գիտելիքների գնահատման ուղղությամբ: 4-րդ դասարանում սովորողների մաթեմատիկական առարկաների գիտելիքների գնահատման մոնիթորինգի արդյունքներով, 2003թ. և 2007թ. Հայաստանի Հանրապետությունը զբաղեցրել է բարձր համարվող 20-րդ տեղը: 2007թ. 8-րդ դասարանում սովորողների մաթեմատիկական առարկաների գիտելիքների գնահատման մոնիթորինգի արդյունքներով, մեր երկիրն ունեցել է շատ բարձր համարվող 13-րդ տեղը: Սակայն այստեղ դիտարկվել է որոշակի հետընթաց, և 2011թ. ու 2015թ. իրականացված մոնիթորինգի արդյունքներում մեր երկիրը ներառված չէ: 2011թ. մոնիթորինգի տվյալներով, հետազոտության առանձին ուղղություններում Ուկրաինան զբաղեցրել է 18-րդ և 19-րդ տեղերը: Անհրաժեշտ է ընդգծել, որ ուսումնասիրվող այս ոլորտում մեր կողմից քննարկվող մյուս երկրները հետին դիրքերում են ու մոնիթորինգի հիմնական արդյունքներում նշված չեն:

Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ինդեքսում (2015թ., 167 երկիր) դիտարկվող երկրներից Հայաստանը ամենաառաջատար դիրքն է գրավում, չնայած համաշխարհային դասակարգման մեջ այդ դիրքը միայն 76-րդ տեղն է: Ուկրաինան 79-րդ, իսկ Մարոկկոն՝ 99-րդ տեղում է, իսկ Լիբիան նույնիսկ ընդգրկված չէ այս դասակարգման մեջ:

Բիզնեսի իրականացման մատչելիության մակարդակի գնահատող ինդեքսը 2016թ. տվյալներով, հաշվարկվել է 190 երկրների համար: Մեր կողմից վերլուծվող տնտեսությունների համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունն ամենաառաջատար դիրքն է գրավում: Այս ինդեքսի համաշխարհային դասակարգման մեջ ՀՀ-ն զբաղեցնում է 38-րդ հորիզոնականը: Համեմատվող երկրներից հաջորդ լավագույն ցուցանիշն ունի Յամայկան (67-րդ տեղ), իսկ Լիբիան միայն 188-րդ տեղում է:

Ինովացիաների (սորամուծությունների) մակարդակը գնահատող միջազգային ինդեքսը հաշվարկվել է 2012թ. 110 երկրի համար: Մեր կողմից դիտարկվող 11 տնտեսություններից այստեղ ընդգրկված են միայն 7-ը, որոնցից առաջատար դիրքում է Ուկրաինան՝ 64-րդ տեղ, իսկ այս գնահատականով՝ Հայաստանի Հանրապետությունը 75-րդ տեղում է:

Մարդկանց բարեկեցությունը և շրջակա միջավայրի վիճակն արտացոլող երջանկության միջազգային ինդեքսը հաշվարկվել է 2009թ. աշխարհի 143 երկրի համար: Այստեղ հետաքրքիր է նշել, որ մեր կողմից վերլուծվող 11 երկրներից երեքը ընդգրկվել են առաջին տասնյակում (Յամայկա, Գվատեմալա և Սալվադոր): Յամայկան գրավում է երրորդ, Գվատեմալան՝ չորրորդ և Սալվադորը՝ ութերորդ տեղը: Բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակով աշխարհում 108-րդ տեղը զբաղեցնող Յամայկան այս ցուցանիշի հաշվարկով երրորդն է, իսկ մեր երկիրը այստեղ զբաղեցնում է 48-րդ հորիզոնականը:

Կարելու է նաև դիտարկել այսօրվա տնտեսության համար կարևորագույն համարվող ռեսուրսների արդյունահանման, արտադրության և սպառման ցուցանիշների համեմատությունը:

Աշխարհի տարբեր երկրներում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները հաշվարկվել են 2013թ. 214 երկրների համար: Մեզ հետաքրքրող երկրներից այս ցուցանիշում բավական առաջատար դիրք է զբաղեցնում Ուկրաինան (22-րդ տեղ), իսկ հաջորդ առաջատար դիրքում է գտնվում Պարագվայը՝ 51-րդ տեղ: Այս տնտեսական ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է միայն 100-րդ դիրքը:

Երկաթահանքի արդյունահանման ծավալները հաշվի առնող միջազգային դասակարգման մեջ Ուկրաինան զբաղեցնում է խիստ բարձր համարվող՝ 6-րդ տեղը, իրենից հետ թողնելով այնպիսի հզոր երկրների, ինչպես ԱՄՆ-ը, Կանադան և Գերմանիայի Դաշնությունը: 42-րդ դիրքն է գրավում Մարոկկոն, իսկ չուգունի արտադրության գծով համաշխարհային դասակարգման մեջ Ուկրաինան գրավում է դարձյալ 6-րդ տեղը, առաջ անցնելով Գերմանիայից, ԱՄՆ-ից և Ֆրանսիայից: Աշխարհում պողպատի արտադրության ծավալներով Ուկրաինան 10-րդն է, եւ դա այն դեպքում, երբ այդ ցուցանիշով Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան զբաղեցնում են 15-րդ և 18-րդ տեղերը: Մեր կողմից ուսումնասիրվող մյուս տնտեսություններն առաջատար երկրներ չեն համարվում սև մետաղների համաշխարհային արտադրության ընդհանուր

ծավալներում: Առաջատար երկրներում քարածխի արդյունահանման ծավալների դիտարկման ժամանակ քննարկվող տնտեսություններից նույնպես առանձնանում է միայն Ուկրաինան՝ 11-րդ տեղ:

Այսօր ցանկացած տնտեսության համար խիստ կարևոր համարվող գունավոր մետաղների արտադրության ծավալների դիտարկումը ցույց է տալիս հետևյալ պատկերը: Այլումիսի համաշխարհային արտադրության ծավալներում մեզ հետաքրքրող երկրները ներառված չեն և առաջնակարգ դիրքեր չեն զբաղեցնում, իսկ ցինկի համաշխարհային արտադրության ծավալներում 16-րդ դիրքն է զբաղեցնում Մարոկկոն: Արդյունահանվող պղնձի քանակությամբ առաջնային դիրք է զբաղեցնում Չայաստանի Հանրապետությունը՝ 30-րդ տեղ, իսկ մեր ուսումնասիրած երկրներից այստեղ 42-րդ հորիզոնականն է զբաղեցնում Մարոկկոն: Աշխարհի երկրներում ուրանի պաշարների ու արտադրության ծավալների գնահատման արդյունքներով առանձնանում է Ուկրաինան՝ 11-րդ տեղ: Այս վերլուծությունում նաև նշվում է Չայաստանի Հանրապետությունում եղած ուրանի որոշակի պաշարների մասին:

Յետաքրքիր տվյալներ է ներառում ՕՊԵԿ-ի կողմից կատարված ուսումնասիրությունն աշխարհի առաջատար երկրներում նավթի և բնական գազի արդյունահանման ծավալների վերաբերյալ: Նավթի արդյունահանման ծավալներով բարձր համարվող 29-րդ դիրքում է Լիբիան, իսկ 46-ում՝ Ուկրաինան: Մեր կողմից ուսումնասիրվող տնտեսություններից նշված երկրներն են ներառված նաև աշխարհում բնական գազի արդյունահանման առավել նկատելի ծավալներ ապահովող երկրների ցանկում, որտեղ Ուկրաինան զբաղեցնում է 33-րդ, իսկ Լիբիան՝ 38-րդ տեղը: Սակայն երբ դիտարկում ենք առավել շատ նավթ սպառող երկրների ցուցակը (ինչը, անկասկած, վկայում է տվյալ տնտեսության զարգացման բարձր մակարդակի մասին), ապա այստեղ, 67 երկրների ցանկում ներառված է միայն Ուկրաինան՝ 53-րդ տեղ: Ընդ որում, Ուկրաինան սպառում է օրական 183 հազար բարել նավթ, եւ դա այն դեպքում, երբ կարողանում է արդյունահանել միայն դրա 17,6%-ը (օրական 32,3 հազար բարել): Չնայած նավթի արդյունահանման ծավալներով Լիբիան 12 անգամ գերազանցում է Ուկրաինային, սակայն սպառման ծավալներով այն ընդգրկված չէ 67 առաջատար երկրների ցանկում, քանի որ արդյունահանված նավթը հիմնականում արտահանում է:

Երբ դիտարկում ենք Համաշխարհային բանկի իրականացրած ուսումնասիրությունները տարբեր երկրների միջազգային ռեզերվների վերաբերյալ (2015թ., 168 երկիր), ապա պատկերը հետևյալն է: Շատ բարձր դիրքում է Լիբիան՝ 29-րդ տեղ, գերազանցելով այնպիսի զարգացած երկրների, ինչպես Շվեդիան, Նորվեգիան, Իսպանիան, Ավստրալիան, Արգենտինան: Փաստորեն, այս կարևորագույն ցուցանիշը նույնպես էական դեր չի խաղում բնակչության բարձր կենսամակարդակ ձևավորելու գործընթացում: Մեր կողմից քննարկվող տնտեսություններից 52-րդ տեղում է Մարոկկոն, 65-ում՝ Ուկրաինան, իսկ տվյալ գնահատականով՝ Չայաստանի Հանրապետությունը 107-րդն է:

Աշխատանքում իրականացված ուսումնասիրությունը և վերլուծական նյութը մեզ թույլ է տալիս գալ հետևյալ եզրահանգումներին:

- Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում երկրի զգալի տարածքը կամ բնակչության մեծ թիվը դեռևս հնարավորություն չի տալիս ապահովել բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ավելացում և հասարակության բարեկեցության բարձրացում, որոնց մասին են վկայում վերը բերված օրինակները: Մեծությամբ աշխարհում 16-րդը համարվող Լիբիան չի կարողանում 21-րդ դարում արդյունավետ ձևով օգտագործել իր ունեցած հսկայական տարածքները (նույնիսկ եթե դրանք հիմնականում անապատային գոտիներ են): Նույնը վերաբերում է նաև Ուկրաինային և Մարոկկոյին (մեծ տարածք և բնակչության մեծ թիվ):

- Ցանկացած տնտեսությունում Էներգետիկ և հանքահումքային որևէ ռեսուրսի (նույնիսկ՝ կարևորագույն ռեսուրսի) գերակշռությունը դեռևս չի նշանակում, որ այդ երկիրը միայն դրա շնորհիվ կարող է տնտեսական բարձր և առաջանցիկ աճ ապահովել: Նշեմք հզոր Էներգետիկ համակարգ, երկաթահանքի, ուրանի և քարածխի խոշոր պաշարներ ունեցող Ուկրաինայի, ինչպես նաև արդյունահանվող նավթի զգալի քանակության տիրապետող Լիբիայի տնտեսությունները: Նույնը վերաբերում է նաև պղնձի արդյունահանման մակարդակով աշխարհում 30-րդը համարվող Չայաստանի Հանրապետության տնտեսությանը:

- Մեր կողմից ուսումնասիրված երկրներում շուկայական համակարգը և տնտեսության հիմնական ճյուղերը կայուն և հիմնականում համալիր տնտեսական զարգացում չեն ապահովում: Եվ այս պայմաններում Էներգետիկ և արդյունահանվող հանքահումքային ռեսուրսների մեծ քանակությունն առավել շատ նպատակաուղղվում է ոչ թե տվյալ երկրի արդյունաբերության զարգացմանը, այլ այդ ռեսուրսների արտահանմանը: Օրինակ, Լիբիայում արդյունահանվող և արտահանվող նավթի մեծ պաշարները կամ, նաև, Չայաստանից արտահանվող պղնձի ու մոլիբդենի զգալի ծավալները:

- Այսօրվա բազմաբնույթ և բազմաշերտ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական որևէ գործոնի առավելությունը, կամ նույնիսկ գերակշռությունը դեռևս չնշանակում է, կամ շատ քիչ է որևէ առանձին վերցրած երկրում բնակչության բարձր բարեկեցությունն ապահովելու համար: Ինչպես արդեն նշվեց, բիզնեսի իրականացման մատչելիության մակարդակը գնահատող ինդեքսով Չայաստանի Հանրապետությունը աշխարհի երկրների ցանկում զբաղեցնում է 38-րդ հորիզոնականը: Մարդկանց բարեկեցությունը և շրջակա միջավայրի վիճակը արտացոլող երջանկության միջազգային ինդեքսով աշխարհի 143 երկրների շարքում Յամբյակն գրավում է երրորդ, Գվատեմալան՝ չորրորդ և Սալվադորը՝ ութերորդ տեղը: Սակայն տնտեսության իրական կյանքում այս ցուցանիշները շատ քիչ են նպաստում ՀՆԱ-ի և հատկապես՝ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի նկատելի աճին:

- Բնակչության բարեկեցության բարձր մակարդակ ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է խիստ բարենպաստ և ազատ մրցակցային պայմաններ ստեղծել տնտեսության բոլոր ճյուղերի ու ոլորտների արագ զարգացման համար: Ազատ մրցակցային շուկան ինքը կարող է շատ կտրուկ կարգավորել տնտեսությունը, ապահովելով նաև արագ զարգացում և բնակչության բարեկեցության բարձրացում: Ընդ որում, որպես կանոն, այստեղ առաջնային և, ինչ որ չափով, նաև համախմբող դեր են սկսում կատարել հենց այն տնտեսական ռեսուրսները և գործոնները, որտեղ այդ երկիրն ունի նկատելի առավելություններ և որոնք նրա տնտեսության համար կարող են համարվել գերակա ուղղություններ (Չայաստանի Հանրապետության դեպքում, դա կարող է լինել, ասենք, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, կրթական համակարգը, գրոսաշրջությունը, հանքարդյունաբերությունը, արդյունաբերության նոր զարգացող ճյուղերը): Բարձր մրցակցային շուկայի պայմաններում պարզ և հստակ գործող հարկային համակարգը ցանկացած տնտեսությունում կօգնի արագ իրականացնել վերը նշված դրական տեղաշարժերը:

- Չայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունել է 2017-2022թթ. հնգամյա զարգացման ծրագիր, որը, մասնավորապես, նպատակադրում է զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում համախառն ներքին արդյունքի միջին հաշվով շուրջ 5% աճի ապահովման միջոցով[6]: Մեր երկրի տնտեսական զարգացման նշված ծրագրով նաև նախատեսվում է արտահանման աճի նշանակալի տեմպերի ապահովում ապրանքների և ծառայությունների արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում հասցնելով 40-45%-ի: Կարծում ենք, որ նշված նպատակային խնդիրների լուծումը պետք է զուգակցվի բոլոր ճյուղերի ու ոլորտների, բոլոր տարածաշրջանների համալիր զարգացման,

բարձր սրցակցային շուկայի ձևավորման, ինչպես նաև տնտեսական արդյունավետ քաղաքականության իրականացման հետ: Այդ միջոցառումները հնարավորություն կտան նկատելիորեն բարձրացնել ՀՆԱ-ն և, այդ թվում շատ կարևորվող՝ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն:

1. М.З. Бор, История мировой экономики, Конспект лекций, М., 1998г, с. 80, 233.
2. М.З. Бор, История мировой экономики, Конспект лекций, М., 1998г, с. 250.
3. <https://www.e-reading.club/chapter.php/127765/92/Maksakovskiii>
4. [https://ru.wikipedia.org/wiki/Мировое\\_потребление\\_энергии](https://ru.wikipedia.org/wiki/Мировое_потребление_энергии)
5. [https://ru.wikipedia.org/wiki/Список\\_стран\\_по\\_ВВП\\_\(ППС\)\\_на\\_душу\\_населения](https://ru.wikipedia.org/wiki/Список_стран_по_ВВП_(ППС)_на_душу_населения)
6. [www.arlis.am/banners/HH\\_kar-cragir.pdf](http://www.arlis.am/banners/HH_kar-cragir.pdf)

*Ներկայացվել է 14.07.2017թ.  
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.*